

Վարչական ակտի պատշաճ ծանուցման և դատական պաշտպանության հիմնախնդիրները

Հայկ Ղազարյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.2-150>

Հանգուցային բառեր. վարչական ակտ, վարչարարություն, իրազեկում, օրենք, դատական պաշտպանություն

Նախաբան: Վարչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտը հանդիսանում է վարչական մարմիններին, այսինքն՝ իշխանական լծակներով օժտված Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններին, Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններին և անձանց կապող հիմնական օղակներից մեկը, քանզի վարչական ակտն ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է գրավոր վարչական ակտի մասին դրա հասցեատիրոջը իրազեկելու վերաբերյալ ընդհանուր կանոն, համաձայն որի՝ գրավոր վարչական ակտը վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձի կողմից ստորագրվելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին [2]:

Վարչական իրավախախտումների հիման վրա կայացված վարչական ակտերի մասին ծանուցման կարգը սպառիչ կերպով սահմանված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով:

Սույն հոդվածում քննարկվում են վարչական ակտի մասին դրա հասցեատիրոջն իրազեկելու և իրազեկման պատշաճության շուրջ ծավալվող հիմնահարցերը: Վեր են հանվում գործող բացերը, պրակտիկայում առկա խնդիրների վերաբերյալ առաջարկվում են լուծումներ, ինչպես նաև հաշվի է առնվում գործող դատական պրակտիկան:

Գրավոր վաչական ակտի պարագայում ՀՀ գործող օրենսդրությունը հստակ նախատեսում է վարչական ակտն ընդունված համարելու պահը, այն է՝ վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձի կողմից ստորագրելը:

Օրենսդրությունը նախատեսում է գրավոր վարչական ակտն ընդունված համարելու էական տարրեր, որոնցից յուրաքանչյուրի առկայությունը անհրաժեշտ է, իսկ երկուսը միասին բավարար՝ գրավոր վարչական ակտն ընդունված համարելու համար: Դրանք են՝

- վարչական ակտը պետք է ստորագրվի,
- վարչական ակտը պետք է ստորագրվի հենց վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձի կողմից:

ՀՀ վճռաբեկ դատարանը 19.07.2011 թվականի թիվ ՎԴ2/0286/05/10 վարչական գործով կայացված նախադեպային որոշմամբ [3] արձանագրել է, որ վար-

չական ակտին տեղեկանալու իրավունքը պաշտպանվում (երաշխավորվում) է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ և 60-րդ հոդվածներով նախատեսված նորմերով:

Օրենսդրությունը նախատեսում է իրազեկման երեք եղանակ. այդ եղանակներն են՝

- իրազեկելը վարչական ակտի գոյության մասին պատվիրված փոստի միջոցով, այդ թվում՝ հասցեատիրոջ կողմից ստանալու փաստը հավաստող ծանուցմամբ,
- իրազեկելը վարչական ակտի գոյության մասին հասցեատիրոջը ձեռագիր ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով (ուղղակի հանձնման ձև),
- իրազեկելը վարչական ակտի գոյության մասին հանձնման՝ օրենսդրությամբ չարգելված այնպիսի եղանակներով, որոնք հնարավորություն կընձեռեն հավաստել հասցեատիրոջ կողմից ակտը ստանալու կամ օրենքով սահմանված դեպքերում պատշաճ ծանուցված լինելու փաստը:

Իհարկե, հանձնման մյուս միջոցները կիրառվում են այն դեպքում, երբ առկա է հիմնավոր պատճառ ստորագրությամբ առձեռն հանձնելու հնարավորության բացակայության համար, այդ թվում, եթե հասցեատերն ինքը դիմել է վարչական մարմնին հանձնման այլ միջոցներ կիրառելու խնդրանքով [1]:

Վերոնշյալ իրավանորմի լույսի ներքո պարզ է դառնում, որ օրենսդիրը, հստակ նախատեսելով վարչական ակտի մասին իրազեկման միմյանց հետ փոխկապակցված երեք եղանակ, նախատեսել է նաև մի իրավական կարգավորում, որի տարածական մեկնաբանման արդյունքում հանգում ենք այն իրավական դիրքորոշմանը, որ գրավոր վարչական ակտի մասին իրազեկման օրենսդրորեն նախատեսված այլ եղանակները, քան վարչական ակտը առձեռն ստորագրությամբ դրա հասցեատիրոջը հանձնելն է, կիրառելի են միայն այն պարագայում, երբ վարչական մարմնի կողմից փորձ է կատարվել վարչական ակտն առձեռն ստորագրությամբ դրա հասցեատիրոջը հանձնել, և իրենից անկախ՝ հարգելի պատճառներով վերջինս չի հասել ցանկալի արդյունքի:

Ակնառու է, որ հերթական հաջորդ եղանակը կիրառելի է միայն նախորդ եղանակը կիրառելու և ցանկալի արդյունքի չհասնելու պարագայում, ընդ որում՝ օրենսդիրը մյուս երկու եղանակների մեջ առաջնայնություն չի նախատեսում, այսինքն՝ դրանցից յուրաքանչյուրի կիրառումը պայմանավորված չէ մյուսի կիրառման և ցանկալի արդյունքի չհասնելու հետ:

Հոդվածի հիմնական բովանդակությունը:

Պրակտիկայում, սակայն, կիրառվում է վարչական ակտի մասին իրազեկելը պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ: Նման պրակտիկայի ձևավորումը պայմանավորված է հատկապես այն հանգամանքով, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը հստակ չի նախատեսում գրավոր վարչական ակտը հանձնելու այլընտրանքային տարբերակներ՝ դրա ընտրությունը թողնելով վարչական մարմնի հայեցողությանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, թիվ ԵՇԴ/3780/02/14 դատական գործի շրջանակնե-

րում անդրադառնալով հայեցողության ինստիտուտին, արձանագրել է հետևյալը՝ ««Հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է» [4]: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Մահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը» [5]:

Այսպիսով՝ վարչական մարմինը վարչական ակտի մասին դրա հասցեատիրոջն իրազեկելու եղանակների առումով, որոշակի վերապահումներով, ունենալով հայեցողական լիազորություններ, այսինքն՝ թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորություն, այնուամենայնիվ կաշկանդված է անձի իրավունքներով և իրավունքի գերակայությամբ հայեցակարգով:

Տեղայնացնելով վերոգրյալ իրավական մեկնաբանությունները սույն հոդվածի քննարկման առարկա հանդիսացող թեմայի շրջանակներում՝ կարելի է եզրակացնել, որ վարչական մարմինը վարչական ակտը դրա հասցեատիրոջը առձեռն ստորագրությամբ հանձնելու անհնարինության դեպքում իր հայեցողական լիազորությունների իրացմամբ կարող է անձին վարչական ակտի գոյության մասին իրազեկել հնարավոր այլ եղանակներով, որոնք կլինեն իրավաչափ, չեն խախտի անձանց իրավունքները և կբխեն իրավունքի գերակայության տրամաբանությունից:

Պայմանավորված այն հանգամանքով, որ վարչական մարմինները կիրառում են թվարկված իրազեկման եղանակներից միայն երկուսը, այն է՝ վարչական ակտը դրա հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելը և փոստային առաքման եղանակով ուղարկելը, պրակտիկայում կարող են առաջանալ խնդիրներ՝ կապված, օրինակ, վարչական ակտի հարկադիր կատարման հետ, քանզի սպառելով հիշյալ եղանակները և չհասնելով ցանկալի արդյունքի, որը տվյալ պարագայում վարչական ակտի մասին դրա հասցեատիրոջը իրազեկելն է՝ վարչական մարմինը ձեռնամուխ չի լինում այլընտրանքային եղանակներով իրազեկել վարչական ակտի գոյության մասին՝ խուսափելով ինչ-որ կերպ ոտնահարել անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

Թեև օրենսդիրը հստակ չի նախատեսում հնարավոր շրջանակ՝ կապված վարչական ակտի գոյության մասին դրա հասցեատիրոջն իրազեկելու այլընտրանքային եղանակների հետ, այնուամենայնիվ, դրանք կարող են տարբեր լինել,

որոնցից մեկ կամ երկուսին իրավանորմի տեսք տալը կլուծի բազմաթիվ ընթացակարգային խնդիրներ: Նման իրավիճակում կարևոր հարցը այն է՝ արդյո՞ք իրազեկման այդ եղանակի կիրառումը չի խախտում անձի իրավունքներն ու օրինական շահերը:

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է ստացել 2015 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածում, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների ու ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: Իսկ 50-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների:

Վարչական իրավախախտումների հիման վրա կայացված վարչական ակտերի մասին ծանուցման կարգը սպառիչ կերպով սահմանված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով:

Մասնավորապես, վարչական ակտի մասին ծանուցման միջոց է այն հասցեատիրոջն անձամբ հանձնելը, դրա անհնարինության դեպքում՝ հանձնման այնպիսի եղանակով ծանուցելը, որով կհավաստվի պարտավոր անձի՝ վարչական ակտի մասին ծանուցումը ստացած լինելու փաստը: Միայն նախորդ երկու եղանակով անձին ծանուցելու անհնարինության դեպքում օրենքով պատշաճ ծանուցումն ապահովելու միջոց է դիտարկվում հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տվյալ ակտի հրապարակումը, ընդ որում՝ համապատասխան դիմումի առկայության դեպքում նորմը սահմանում է հրապարակելուն զուգահեռ դիմումում նշված հեռահաղորդակցության միջոցով ակտը հասցեատիրոջը ևս մեկ անգամ ուղարկելու պարտականություն:

Այսպիսով, կատարողական վարույթ հարուցելիս դատական ակտերի հարկադիր ծառայությունը օրենքի ուժով («Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք, հոդված 31.1. և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 88, մաս 4) պարտավոր է ստուգել համապատասխան գրությանը կից ներկայացվող փաստաթղթերը («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենք, հոդված 88, մաս 4)՝ հավաստիանալու համար, որ վարչական ակտը անբողոքարկելի է դարձել («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենք, հոդված 88, մաս 1-ին, որի պահանջներին հղում է արվում նույն հոդվածի 4-րդ մասում) այդ ակտի մասին օրենքով սահմանված կարգով իրազեկելու կամ հասցեատիրոջը հանձնելու կամ այլ կերպ պատշաճ ծանուցելու արդյունքում և կատարման է ներկայացվել օրենքով սահմանված ժամկետում:

Մինչդեռ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ հարկադիր կատարման ծառայությունը, ստանալով հանրային իրավական դրամային պահանջը կատարելու մասին գրություն, պատշաճ չի

հետազոտում դրան կից ներկայացվող փաստաթղթերը, մասնավորապես չի կատարում վարչական ակտը անբողոքարկելի դարձած լինելու հանգամանքի բազմակողմանի ստուգում (այդ թվում՝ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տվյալ ակտի հրապարակմանը նախորդող ծանուցման կարգի սպառման վերաբերյալ):

Բացի դրանից՝ արձանագրվել են դեպքեր, երբ հարկադիր կատարման ծառայությունը կատարողական վարույթ է հարուցել բացառապես կատարման վերաբերյալ գրությունների հիման վրա՝ առանց վարչական մարմնի կողմից պահանջի հիմք հանդիսացած որոշման անբողոքարկելի դառնալու մասին որևէ ապացույց ներկայացնելու, ինչպես նաև այն դեպքերում, երբ հենց կատարման վերաբերյալ գրությամբ նշված (կամ չնշված) տեղեկատվությունից ակնհայտ է դրա անհամապատասխանությունը ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդված 4-րդ մասի պահանջներին [6]:

Վկայակոչված իրավական ակտերով սահմանված պահանջների՝ հարկադիր կատարման ծառայության կողմից խախտումը պարբերաբար արձանագրվում է դատական պրակտիկայում, ինչպես օրինական ուժի մեջ մտած տասնյակ դատական ակտերով [7], այնպես էլ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշումներով [8], ըստ որում՝ դատարանների միասնական դիրքորոշումը հետևյալն է. հարկադիր կատարման ծառայության պարտականությունն է, նախքան կատարողական վարույթ հարուցելը, կատարման վերաբերյալ գրություններին կից ներկայացվող պարտապանի պատշաճ ծանուցման վերաբերյալ ապացույցների առկայության ստուգումը և դրանց գնահատումը: Այս դիրքորոշումը ուղղակիորեն բխում է Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի, 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներից, ինչպես նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի պահանջներից:

Ի թիվս այլ դատական ակտերի, թիվ ՎԴ/2469/05/19 վարչական գործով ուժի մեջ մտած վճռով մանրամասն պարզաբանվել են հիշատակված օրենսդրական պահանջներից բխող գործողությունները: Այսպես, «... այնպիսի դեպքերում, երբ վարչական ակտի վերաբերյալ անձը ծանուցվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով, վարչական մարմինը ակտը հարկադիր կատարման ներկայացնելիս, պետք է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը ներկայացնի նաև այն փոստային թղթակցությունը, որով հիմնավորվում է, որ անձի հայտնած հասցեով ուղարկված որոշումը վերադարձվել է, ծանուցման փաստը չի հաստատվել կամ հասցեատերը հրաժարվել է այն ստանալուց: Միայն նշված ապացույցների առկայության պայմաններում վարչական ակտի հարկադիր կատարման վերաբերյալ դիմումը կարող է համարվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին համապատասխան, իսկ քանի դեռ դիմումին կից ներկայացված չեն վերը նշված ապացույցները, դիմումը չի համապատասխանում օրենքով սահմանված պա-

հանջներին և այդ դեպքում, հարկադիր կատարողը՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31.1-ին հոդվածի կարգավորմամբ, պետք է վերադարձնի դիմումը, այնինչ, տվյալ դեպքում Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը անտեսել է նշված իրավանորմերի պահանջները, որոնց ուժով դիմումը պետք է համարվեր օրենքին չհամապատասխանող և ոչ իրավաչափորեն հարուցել է կատարողական վարույթ...» [9]:

Արձանագրենք նաև, որ դատական գործերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ վիճարկված բազմաթիվ դեպքերում վարչական մարմնի ընդունած ակտի մասին հասցեատիրոջը պատշաճ ծանուցելու վերաբերյալ ապացույցները բացակայել են ոչ միայն հարկադիր կատարման վարույթի նյութերում, այլև նման ապացույց չի ներկայացվել համապատասխան վարչական մարմնի կողմից [10]: Հետևաբար, դատական պրակտիկայում պարբերաբար արձանագրվող փաստերը վարչական ակտի մասին հասցեատիրոջը պատշաճ ծանուցելու խնդրի վերաբերյալ պետք է ազդակ հանդիսանան հարկադիր ծառայության համար՝ նշված օրենսդրական պահանջի կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու համար:

Արձանագրենք նաև, որ ՀՀ Սահմանադրական դատարանի 2015 թ.-ի մայիսի 26-ի թիվ ՍԴՌ-1210 որոշմամբ շեշտվել է այն հանգամանքը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախկին կարգավորումներով (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի կանոնակարգումներով՝ անձը համարվում էր ծանուցված նույնիսկ այն դեպքում, երբ նա «...չի եղել տրանսպորտային միջոցի գրանցման (հաշվառման) կամ վարորդական վկայական ստանալու կամ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու ժամանակ իր կողմից նշված հաշվառման (գտնվելու) կամ բնակության վայրում...») խախտվում էին անձի պատշաճ ծանուցման և դատական պաշտպանության իրավունքները, քանի որ անձի նկատմամբ պետության հարկադրանքի միջոցները կիրառվում էին առանց անձի տեղեկացվածության, առանց նրան հնարավորություն ընձեռելու՝ օգտվելու օրենքով նախատեսված պաշտպանական կառուցակարգերից և օրենքով իր վրա դրված պարտականությունը կամովին կատարելու հնարավորությունից» [11]:

Վերոգրյալ հարցի լուծման նպատակով առաջարկվում է ձեռնարկել հետևյալ միջոցները.

Հարկադիր կատարողը պարտավոր է վարչական մարմնին վերադարձնել կատարման վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը բոլոր այն դեպքերում, երբ կատարման վերաբերյալ գրությանը կցվել է միայն վարչական ակտի ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով անձին ծանուցելու վերաբերյալ քաղվածքը՝ առանց փոստային թղթակցության ներկայացման, որով հիմնավորվում է, որ անձի հայտնած հասցեով ուղարկված որոշումը վերադարձվել է, ծանուցման փաստը չի հաստատվել, կամ հասցեատերը հրաժարվել է այն ստանալուց.

Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդրությունը նախատեսում

է, որ եթէ առկա է վարչական ակտի հասցեատիրոջ կողմից լիազորված անձ, ծանուցումը կարող է փոխանցվել նրան [12]:

Երկրի ներսում փոստով փոխանցված գրավոր վարչական ակտը համարվում է հրապարակված՝ փոստին հանձնելուց հետո երրորդ օրը: Երկրի ներսում կամ արտերկրում էլեկտրոնային եղանակով փոխանցված վարչական ակտը համարվում է հրապարակված ուղարկումից հետո երրորդ օրը:

Այն պարագայում, երբ կասկած է առաջանում վարչական ակտի հրապարակված լինելու վերաբերյալ, վարչական մարմինը պարտավոր է ապացուցել հրապարակված լինելու փաստը, այսինքն՝ վարչական մարմինը պետք է ապացուցի վարչական ակտի հասցեատիրոջը հասանելիությունը և հասանելության ժամանակը:

Շահագրգիռ անձի համաձայնությամբ էլեկտրոնային վարչական ակտը կարող է հրապարակվել շահագրգիռ անձի կամ նրա լիազորված անձի կողմից հանրամատչելի ցանցերի միջոցով այն ստանալու եղանակով: Վարչական մարմինը պարտավոր է երաշխավորել էլեկտրոնային եղանակով ստացող սուբյեկտի իսկությունը և նրա կողմից վարչական ակտը հրապարակված է համարվում ուղարկելու հաջորդ օրը:

Վարչական ակտը կարող է հրապարակվել հրապարակայնորեն, եթէ դա թույլատրված է օրենսդրությամբ: Ընդհանուր կարգադրությունը կարող է հրապարակայնորեն հայտարարվել, նույնիսկ եթէ հայտարարությունը պարտադիր չէ շահագրգիռ կողմերի համար:

Գրավոր կամ էլեկտրոնային վարչական ակտի հրապարակային հրապարակումն իրականացվում է տեղական մակարդակում: Տեղական ծանուցման մեջ նշվում է, թե որտեղ կարող է քննվել վարչական ակտը, ինչպես նաև դրա հիմնավորումը: Վարչական ակտը հրապարակված է համարվում տեղական ծանուցումից երկու շաբաթ հետո:

Ինչպես տեսնում ենք, հայաստանյան մոդելը կորդինալ տարբերվում է գերմանական մոդելից: Ապրելով տեխնոլոգիական մեծ զարգացումների դարում, որտեղ շատ մեծ կարևորություն է տրվում վիրտուալ կյանքի գոյությանը, որպես իրազեկման միջոց կարող են դիտվել, օրինակ, սցիալական կայքերը, որտեղ վարչական ակտի հասցեատերն ունի իր անվամբ էջ:

Իրազեկումը կարող է տեղի ունենալ նաև հեռախոսահամարի միջոցով, որն օգտագործվում է վարչական ակտի հասցեատիրոջ կողմից: Ընդ որում, հեռախոսահամարի միջոցով իրազեկումը ևս իր հերթին կարող է լինել երկու տիպի՝ իրազեկում հաղորդագրության միջոցով և իրազեկում հեռախոսազանգի միջոցով:

Հաղորդագրության միջոցով վարչական ակտի գոյության մասին դրա հասցեատիրոջն իրազեկելու պրակտիկան օգտագործվում է, օրինակ, ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանության» ծառայության կողմից, որը քաղաքացու ցանկությամբ իր նկատմամբ կայացված վարչական տույժ նշանակելու մասին որոշումների գոյության մասին տեղեկացնում է հաղորդագրության միջոցով:

Նման եղանակով իրազեկելու շուրջ ծառացող խնդիրները ևս քիչ չեն. օրի-

նակ, վարչական մարմինը միշտ չէ, որ կարող է պարզել վարչական ակտի հասցեատիրոջ կողմից իրապես շահագործվող հեռախոսահամարը, քանի որ մեր իրականության մեջ շատ հաճախ են պատահում դեպքեր, երբ հեռախոսահամարը ձեռք է բերվում մի անձի կողմից, սակայն շահագործվում է մեկ այլ անձի կողմից: Հենց այս խնդրից ելնելով՝ իրազեկման նման եղանակը արժանահավատ կղիտվի և կհամարվի պատշաճ, եթե անձն ինքն է դիմել՝ խնդրելով իրեն իրազեկել վարչական ակտի գոյության մասին որևէ կոնկրետ հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու միջոցով:

Հեռախոսագանգի միջոցով իրազեկումը, բացի նրանից, որ կարող է առաջ բերել նույնաբովանդակ խնդիրներ, ինչ հաղորդագրության միջոցով իրազեկման շուրջ ծառայող խնդիրներն են, նաև ունի իրեն բնորոշ առանձնահատկությունները:

Հեռախոսագանգի միջոցով իրազեկումը կարող է խնդրահարույց լինել այն պարագայում, երբ վարչական մարմինն իրազեկման փաստը հիմնավորելու նպատակով պետք է կատարի հեռախոսագանգի ձայնագրում, բացի այդ՝ վարչական մարմինը կունենա պարտավորություն՝ ապացուցելու այն փաստը, որ հեռախոսագանգով գրուցողը հենց վարչական ակտի հացատերն է:

Բնտերնետային հավելվածների միջոցով ևս կարող է վարչական ակտի մասին իրազեկում տեղի ունենալ, օրինակ, viber, whatsapp և այլն: Իրազեկման այդ տեսակը ուղղակիորեն կապված է անձի հեռախոսահամարի հետ, սակայն առավել հավաստի է, քանզի առավել հիմնավոր է կատարվում նույնականացում՝ այդ հեռախոսահամարի միջոցով բացված հավելվածը օգտագործվում է վարչական ակտի հասցեատիրոջ կողմից, թե ոչ (օրինակ՝ կարող է առկա լինել նկար, կամ գրված լինել օգտագործողի անունը):

Իրազեկման հնարավոր եղանակների շարքին կարող է դասվել էլեկտրոնային փոստի հասցեին վարչական ակտն ուղարկելը: Բնարկե, այս ապագայում կա խնդիր՝ պարզելու յուրաքանչյուր առանձին վարչական վարույթի շրջանակներում կայացվելիք վարչական ակտի հասցեատիրոջ էլեկտրոնային հասցեն, սակայն այդ խնդիրը ևս կարող է ունենալ տրամաբանական լուծում:

Որպես բարձրացված խնդրի լուծում կարելի է կիրառել, օրինակ, հետևյալ մեթոդը. երբ յուրաքանչյուր անձի տրվում է անձնագիր կամ նույնականացման քարտ, կարող է տրամադրվել նաև անհատական էլեկտրոնային հասցե, որին անհրաժեշտության պարագայում կարող է ուղարկվել վերջինիս վերաբերող առաքանիները՝ այդ թվում վարչական ակտը, որպիսի պարագայում վարչական ակտի հասցեատերը կհամարվի իրազեկված վարչական ակտի գոյության մասին:

Ի տարբերություն ընդհանուր իրավակարգավորումներ պարունակող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի, հատուկ օրենքները կարող են նախատեսել առանձին խմբի վարչական ակտերի մասին դրանց հասցեատերերին իրազեկելու այլ մեխանիզմ, քան «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված մեխա-

նիզմներն են, սակայն դա չի նշանակում, որ սպառելով հատուկ օրենքում նախատեսված վարչական ակտի գոյության մասին իրազեկելու միջոցները՝ վարչական մարմինը չպետք է կիրառի իրազեկման ընդհանուր մեթոդները: Այսպես օրինակ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենքի 283-րդ հոդվածով սահմանված դրույթի ուժով ուղարկված (հանձնվող) որոշումից հրաժարվելը չի կարող վարչական մարմնի կողմից դիտարկվել որպես վարչական ակտի հասցեատիրոջը պատշաճ իրազեկում, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ և 60-րդ հոդվածներով նախատեսված երաշխիքային նորմերը նախատեսում են վարչական ակտի ընդունման մասին իրազեկելու այլ եղանակներ ևս, որոնք ենթակա էին կիրառման [13]:

Խոսելով վարչական ակտի մասին դրա հասցեատիրոջը իրազեկելու ինստիտուտի մասին՝ շատ կարևոր է ընդգծել, որ այն իրենից ենթադրում է վարչական ակտի իրավաբանական ուժ ձեռք բերելու նախապայման:

Եզրակացություն: Վարչական ակտի իրավական ուժ ստանալու համար անհրաժեշտ և պարտադիր պայման է վարչական ակտի հասցեատիրոջ՝ օրենքով սահմանված կարգով ակտի մասին իրազեկված լինելը: Վարչական մարմնի ակտի հասցեատիրոջն իրազեկելու գործողությունների ավարտով էլ մեկնարկում է վարչական ակտի ուժի մեջ մտնելու իրավական գործընթացը, այսինքն՝ վարչական ակտն իր հետևանքներով հանդերձ սկսում է գործել վարչական մարմնի վերը նշված պարտականությունների կատարման արդյունքում: Ամբողջ վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկվում է «պատշաճ ծանուցման» եզրույթի հետևյալ հասկացությունը.

Ընդունված վարչական ակտի գոյության մասին դրա հասցեատիրոջն իրազեկելու վարչական մարմնի պարտականությունը համարվում է պատշաճ իրականացված, եթե վարչական մարմինը, իրավունքի գերակայությանը առաջնահերթություն տալով, կատարում է իրենից կախված բոլոր հնարավոր գործողությունները՝ անձին կայացված վարչական ակտի գոյության մասին փաստացի իրազեկելու համար, որպիսի պայմաններում անձն առնվազն օբյեկտիվ հնարավորություն է ունեցել իրազեկվել վարչական ակտի գոյության մասին:

Վերոգրյալ հասկացության ներդրումը ՀՀ գործող օրենսդրությունում կօգնի ազատել այնպիսի արատավոր երևույթից, ինչպիսին է անձի կողմից իր սուբյեկտի իրավունքների չարաշահումը: Օրինակ՝ անձը, ով ունի գույքահարկի վճարման չկատարված պարտավորություն, հնարավոր եղանակներ է գտնում իրեն ուղղված ծանուցումը չստանալու համար, որպիսի պայմաններում վարչական ակտն այդպես էլ չի մտնում ուժի մեջ, և վարչական ակտի պահանջը մնում է չկատարված, նման պայմաններում օրենսդրության մեջ բացակայում է այդ վարչական ակտերը ուժի մեջ մտած լինելու և անբողոքարկելի դարձած լինելու մասին սպացույցը:

Գրականություն

1. Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք /խմբ.՝ Հ. Թովմասյան, Օ. Լուխթերհանդթ, Գ. Մուրադյան, Վ. Պողոսյան, Վ. Ռայմերս, Ռ. Ռուբել/, Եր., Բավիդ, 2011թ., էջ 258:
2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 12.02.2004 թվականին (10.07.2023):
3. ՀՀ Վճռաբեկ դատարանի 19.07.2011 թվականին կայացված թիվ ՎԴ2/0286/05/10 որոշում (15.07.2023):
4. ՀՀ Վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականին կայացված թիվ ԵՇԴ/3780/02/14 որոշում (17.07.2023):
5. ՀՀ Սահմանադրություն՝ ընդունված 05.07.1995 թվականին, փոփոխված 2015 թվականին (17.07.2023):
6. Տե՛ս, թիվ ՎԴ/0222/05/21, ՎԴ/0848/05/21, ՎԴ/0875/05/21, ՎԴ/0863/05/21, ՎԴ/2224/05/21, ՎԴ/3201/05/21, ՎԴ/6216/05/21, ՎԴ/10384/05/20, ՎԴ/10522/05/20 դատական գործերը (23.07.2023):
7. Տե՛ս թիվ ՎԴ/1334/05/19, ՎԴ/1885/05/19, ՎԴ/2600/05/19, ՎԴ2/0127/05/19, ՎԴ2/0126/05/19, ՎԴ/4424/05/19, ՎԴ/4522/05/19, ՎԴ/5382/05/19, ՎԴ/5374/05/19, ՎԴ/5677/05/19, ՎԴ/6217/05/19, ՎԴ/7076/05/19, ՎԴ/7105/05/19, ՎԴ/8860/05/19, ՎԴ/9444/05/19, ՎԴ/10448/05/19, ՎԴ/1236/05/20, ՎԴ/2033/05/20, դատական գործերը: (30.07.2023):
8. Տե՛ս թիվ ՎԴ/0698/05/20, ՎԴ/2832/05/20, ՎԴ/3231/05/20, ՎԴ/4042/05/20, ՎԴ/4815/05/20, ՎԴ/9823/05/20, ՎԴ/9827/05/20, ՎԴ/0218/05/21, ՎԴ/0865/05/21, ՎԴ/1733/05/21, ՎԴ/1724/05/21, ՎԴ/1998/05/21, ՎԴ/2137/05/21, ՎԴ/2245/05/21, ՎԴ/10482/05/21 դատական գործերը (03.08.2023):
9. Թիվ ՎԴ/2469/05/19 վարչական գործ (03.08.2023):
10. Ուսումնասիրված գործերով դատարանները բոլոր դեպքերում երրորդ անձի կարգավիճակով ներգրավում են համապատասխան վարչական մարմիններին, սակայն մեծ մասամբ վերջիններս որևէ դիրքորոշում չեն ներկայացնում: Թեև գործի լուծման տեսանկյունից սա էական հանգամանք չէ, սակայն դատարանները որոշ դեպքերում արձանագրում են նաև կոնկրետ վարչական մարմնի հարուցած վարչական վարույթի նյութերում ակտի մասին հասցեատիրոջը պատշաճ ծանուցելու վերաբերյալ ապացույցների բացակայության փաստը (ՎԴ/2046/05/20, ՎԴ/10356/05/20): (03.08.2023):
11. ՀՀ ՄԴ 26.05.2015 թ.-ի թիվ ՄԴՈ-1210 որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=98081>: (18.08.2023)
12. «Վարչական վարույթի մասին» ԳԴՀ օրենքը ուժի մեջ է մտել 30.05.1976 թվականին (20.08.2023):
13. ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք՝ ընդունված 06.12.1985 թվականին (28. 08. 2023):

Вопросы надлежащего уведомления и судебной защиты административного акта

Айк Казарян

Резюме

Ключевые слова: административный акт, администрация, осведомленность, право, судебная защита

Административный акт, принимаемый административным органом, является одним из основных звеньев, связывающих административные органы, то есть наделенные властными рычагами республиканские органы исполнительной власти Республики Армения, другие государственные органы, осуществляющие управление на всей территории Республики, и физические лица. Так происходит поскольку административный акт направлен на определение и изменение прав и обязанностей физических лиц, на устранение или признание.

Законом РА «Об основах управления и административной процедуры» предусмотрено общее правило информирования адресата о письменном административном акте, согласно которому письменный административный акт должен быть вручен участникам процесса в течение трех дней после его подписания, компетентным должностным лицом административного органа. Порядок уведомления об административных актах, основанных на административных правонарушениях, исчерпывающе определен статьей 283 Кодекса РА об административных правонарушениях.

В данной статье рассматриваются вопросы информирования адресата об административном акте и целесообразности информирования. Выделены существующие пробелы, предложены пути решения существующих на практике проблем, а также учтена существующая судебная практика.

Issues of Proper Notification and Judicial Protection of an Administrative Act

Hayk Ghazaryan

Summary

Key words: *administrative act, administration, awareness, law, judicial protection*

The administrative act, adopted by the administrative body, is one of the main links connecting the administrative bodies, i.e., the republican executive bodies of the Republic of Armenia endowed with power levers, other state bodies exercising control throughout the territory of the Republic, and individuals, since the administrative act is aimed at defining and changing the rights and obligations of individuals, to the elimination or recognition.

The RA Law “On the Fundamentals of Management and Administrative Procedure” provides a general rule for informing the addressee about a written administrative act, according to which a written administrative act must be handed over to the participants within the three days after its signing. The procedure for notification of administrative acts, based on administrative offenses, is exhaustively defined by Article 283 of the RA Code of Administrative Offenses.

This article discusses the issues of informing the addressee about the administrative act and the advisability of informing. The existing gaps are highlighted, the ways of solution to existing problems are proposed, and the existing judicial practice is also taken into account.

Ներկայացվել է 11.09.2023 թ.
Գրախոսվել է 16.10.2023 թ.
Ընդունվել է տպագրության 23.11.2023 թ.